



# ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



### ՀՈԳԵԳԱՂՈՒՄՏԷՆ ԵՏՔ ՎԵՃԵՐՈՒՊ ԿԻՐԱԿԻ

12 ՅՈՒՆԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Մումապահութեան Հարցը	Էջ 2
Իշխանաւորիմ Աղջիկը եւ Հիւանդ Կինը	Էջ 4
Երկու Կոյրերուն Բժշկութիւնը	Էջ 5
Համր Մարդուն Բժշկութիւնը	Էջ 6
Յիսուս Գալիլիայի մէջ կը Քարոզէ	Էջ 6
Մանուցում	Էջ 8

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ (3.1-11)

**Ա**հաւասիկ, Երկնաւոր Զօրքերու Տէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի գրկէ իրենց գորութիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն: Ալ պիտի չունենան ո՛չ յաղթ կտրիճ ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ ու երէց, ո՛չ յիսնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն ճարտարապետ եւ ո՛չ ալ ճարպիկ կախարդ: Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ քմահաճոյքը պիտի ըլլայ անոնց իշխանը: Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերը պիտի կեղեքէ. երիտասարդը արհամարհանքով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ գռեհիկը՝ ազնուականին: Այն ատեն ամէն մէկը իր եղբայրը կամ հօրը ընտանիքէն մէկ անդամը պիտի բռնէ եւ ըսէ. “Դուն պատմուճան ունիս, եկուր մեր իշխողը եղիւր եւ մեր ուտելիքը դուն հայթայթէ”: Իսկ անիկա պիտի պատասխանէ. “Ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուտելիք ունիմ տունս, ո՛չ հագնելիք. այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար”:

Երուսաղէմը լքուեցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին: Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուեցաւ. Սողոմացիներուն պէս իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց. իրենք իրենց գլխուն չարիք բերին: Արդարին

ըսէք՝ թէ բարի է իր վերջը, որովհետեւ իր գործերուն պտուղը պիտի վայելէ: Բայց վա՛յ անօրէնին. չար պիտի ըլլայ անոր վերջը, որովհետեւ իր գործած չարիքները իրեն պիտի դառնան:

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (11.13-24)

**Ձ**եզի՝ հեթանոսներուդ կ’ըսեմ. հեթանոսներու առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ, մտածելով որ թերեւս այս ձեւով ազգակիցներուս նախանձը գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած գանոնք մերժեց որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ, կը նշանակէ թէ երբ վերստին ընդունի գանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թէ Աստուած վերստին պիտի ընդունի գանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է, կը նշանակէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է. նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են, կը նշանակէ թէ ճիւղերն ալ Աստուծոյ նուիրուած են: Ծիչդ է որ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, եւ դուն որ վայրի ձիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիթենիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեր կտտրած ճիւղերը. մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրադ: Հիմա պիտի ըսես. “Աստուած այդ ճիւղերը կտրեց զի՛ս պատուաստելու համար”: Իրաւ է. անոնք՝ հրեաները կտրուեցան՝

մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրադ:

որովհետեւ չհաւատացին, եւ դուն՝ հեթանոսը, հաւատալուդ համար արմատին վրայ հաստատուեցար. բայց մի՛ հպարտանար, այլ վախցի՛ր: Որովհետեւ եթէ Աստուած բուն ճիւղերուն չխնայեց, թերեւս քեզի երբեք չխնայէ:

Տե՛ս թէ ո՛րքան բարի է Աստուած եւ խիստ միաժամանակ: Խիստ է հաւատքի մէջ կործանածներուն հանդէպ եւ բարի՝ քեզի հանդէպ, պայմանաւ որ շարունակես անոր բարութեան արժանի մնալ. այլապէս դո՛ւն ալ պիտի կտրուիս: Նոյնպէս ալ, եթէ հրեաները թողուն իրենց անհաւատութիւնը, կրկին պիտի պատուաստուին արմատին վրայ, որովհետեւ Աստուած կրնայ զանոնք վերստին պատուաստել: Եթէ դուն, որ իսկականին մէջ վայրի ձիթենի մըն էիր, կտրուեցար եւ պատուաստուեցար ընտանի ձիթենիին վրայ որ քու բունդ չէր, ո՛րքան աւելի դիւրութեամբ պիտի պատուաստուին նոյն այդ ձիթենիին բնական ճիւղերը:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(14.13-21)**

**Ե**րբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամալի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, գլխաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամալի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու:» Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»: Յիսուս ըսաւ. «Հո՛ս բերէք ատոնք»: Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**

ՀԵՌՈՒԱՆ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ  
ԽԱՐԱԳՐԻ ԳԱՐԱԿ Ք. Գ.

ԾՈՒՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՆ (14-17):

«Առիթով մը Յովհաննէսի աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- Ինչո՞ւ մեք եւ Փարիսեցիները յաճախ ծոմ կը պահենք, իսկ բոլ աշակերտներդ չեն պահեր:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Կարելի՞ է հարսանիքի հրաւիրեալներուն ըսել, որ սուգ պահեն, երբ տակաւին փեսան իրենց հետ է: Ժամանակ պիտի գայ, երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ, եւ այն ատեն իրենք ալ ծոմ պիտի պահեն:

Ոչ ոք չլուացուած նոր կտոր մը կը գործածէ հին հագուստի մը համար կարկտան ընելու: Որովհետեւ նոր կտորը փաշտելով՝ հագուստը կը պատռէ, եւ աւելի մեծ կ'ըլլայ պատուածքը: Նմանապէս, ոչ ոք նոր գինիս հին տիկերու մէջ կը լեցնէ, այլապէս տիկերը կը պայթին, գինին կը թափի, եւ տիկերը կը փճանան: Ընդհակառակը, նոր գինիս նոր տիկերու մէջ կը դնեն եւ երկուքն ալ կը պահուին»:

«Ինչո՞ւ մենք եւ Փարիսեցիները յաճախ ծոմ կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»:

Հարցումը պահեցողութեան մասին չէ:

Հրեաները մեր ձեռով պահեցողութիւն չունէին, այլ ծոմապահութիւն ունէին: Ամբողջ օրը ծոմ կը պահէին, եւ օրը մէկ անգամ՝ երեկոյեան կ'ուտէին: Այս սովորութիւնը Օրէնքէն չէր գար: Օրէնքը միայն մէկ անգամ եւ տարին մէկ օրուայ համար կ'ըսէ: Այս մասին նախապէս խօսած եմ: Սակայն բաբելական գերութենէն ետքը՝ ռաբբիներ սկսած էին յաճախակիօրէն կիրարկելի ծոմապահութեան մը: Յիսուսի ժամանակ, ինչպէս Փարիսեցիները մաքսաւորը առակէն գիտենք, շաբաթը երկու օրեր ծոմապահութիւն կը կատարուէր. այդ օրերն էին երկուշաբթին եւ հինգշաբթին:

Յովհաննէս Մկրտիչի աշակերտները եւս նոյն սովորութիւնը կը պահէին: Եւ ահա անոնք կու գան կը մօտենան Յիսուսի ու կ'ըսեն. «Ինչո՞ւ մենք եւ Փարիսեցիները յաճախ ծոմ կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»:

Ինչո՞ւ աշակերտներուն ծոմապահութեան մասին կը հարցուի:

Որովհետեւ սպասումը այն էր, որ ռաբբիներու աշակերտները պէտք է որ

առաւել նախանձախնդրութեամբ պահէին աւանդութիւնները կամ սովորութիւնները: Յիսուս ինքն ալ ռաբբի մը կը համարուէր, ուստի կը խորհէին, թէ անոր աշակերտներն ալ ծոմ պէտք է պահէին:

Յիսուսի պատասխանը՝ կեանքէն իրական օրինակ մըն է: Ըսած է. «Կարելի՞ է հարսանիքի հրաւիրեալներուն ըսել, որ սուգ պահեն, երբ տակաւին փեսան իրենց հետ է»: Ըսել ուզած է, թէ իր աշակերտները հարսանեկան վիճակի մէջ են, եւ ոչ թէ սուգի:

Յիսուս ինչո՞ւ փեսայի եւ հարսանիքի հրաւիրեալներու պատկերով կը խօսի:

Հին Կտակարանին մէջ հարսանեկան պատկերը՝ իբր Աստուծոյ եւ իր ժողովուրդին փոխյարաբերութեան օրինակ ծանօթ էր, յատկապէս Երզնկայի Երզնկայի էջերէն:

Նոր Կտակարանին մէջ ալ նոյն պատկերը գործածուած է, սակայն այս անգամ իբր ապագայ կամ վախճանական իրականութեան նախապատկերացում:

Աստուծոյ եւ իր ժողովուրդին մօտիկութիւնը քայլ մը աւելի մերձեցում արձանագրեց Բանին Աստուծոյ մարդեղութեամբ, սակայն տակաւին անիկա իր կատարեալ վիճակին չէ հասած, այլ պիտի հասնի աշխարհի վախճանին, Քրիստոսի երկրորդ գալուստին: Այն ատեն է, որ Աստուծոյ եւ իր Որդիին հաւատարիմները Նոր Երուսաղէմին մէջ պիտի վայելեն կատարեալ հարսանիքը, այսինքն՝ Աստուծոյ եւ անոր Գառնուկին հետ յաւիտեանական միութիւնը պիտի ապրին:

Ներկայիս հարսանեկան ուրախութիւնը սկսած է, բայց հարսին եւ փեսային միաւորումը կամ «առագաստ» մուտքը դեռ չէ եղած: Հարսանիքի հրաւիրուած ժողովուրդը ուրախութեան մէջ է տակաւին: Մենք հարսանեկան ուրախութեան մէջ ենք եւ անիկա պիտի շարունակուի մինչեւ որ միաւորման ժամանակը հասնի երկնային «առագաստ»ին մէջ, որ Նոր Երուսաղէմն է, վերին Սիոնը:

Յիսուս շարունակելով իր խօսքը, կ'ըսէ. «Ժամանակ պիտի գայ, երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ, եւ այն ատեն իրենք ալ ծոմ պիտի պահեն»: Յիսուս ժամանակի մը մասին կը խօսի: Արդեօք ի՞նչ ժամանակի մասին է խօսքը: Անկասկած Յիսուս ծոմ պահելը անկարելի էր համարել: Ինք իսկ ծոմ պահեց:

Անոր խօսքին մէջ բանալի մը ունինք, որ փեսային վերցուելու փոխաբերութիւնն է: Փեսային վերցուելը կը նշանակէ Յիսուսի Ֆիզիքական ներկայութեան վերցուելը, այսինքն՝ անոր մահը: Բայց Յիսուս մահուան մէջ չմնաց, այլ յարութիւն առաւ, եւ մարդոց պարգեւեց ուրախութիւնը յարութեան յոյսին: Ուստի, եկեղեցին յետ յարութեան հարսանիքին մէջն է: Այդ հարսանիքի ընթացքին Յիսուս Ֆիզիքապէս ներկայ չէ: Սակայն եկեղեցին կը հաւատայ, որ Քրիստոս մնայուն կերպով ներկայ է: Եւ այդ մնայուն ներկայութիւնը հոգեւոր բնոյթ ունի: Հաւատացեալները անջատ չեն իրենց Տիրոջմէն:

Քանի այդպէս է, ինչո՞ւ եկեղեցին ծոմ կը պահէ կամ պահք կը բռնէ:

Նկատի ունենալով, որ մարմնաւոր բնութիւն ենք, ամբողջական օրէն չենք կրնար զգալ Քրիստոսի հոգեւոր ներկայութիւնը. անիկա կը խուսափի մեր Ֆիզիքական զգայարաններէն: Այդ պատճառով ալ անձկութեամբ կը սպասենք այն վայրկեանին, երբ իմաստուն կոյսերուն պէս պիտի կանգնինք երկնային հարսնարանի դրան առջեւ, որպէսզի բացուի անիկա եւ մենք կարենանք ներս մտնել: Որքան ատեն որ այդ վայրկեանին սպասման մէջ ենք, այնքան ատեն զրկուածութիւն մը կ'ապրինք: Ուստի, ծոմ կը պահենք կամ պահք կը բռնենք, որպէսզի հոգեւին պատրաստ ըլլանք Տիրոջ հետ վախճանական միացման:

Ի՞նչ կը հասկնայ Յիսուս «նոր գինի» պատկերով:

Իր բերած նոր վարդապետութիւնն է անիկա:

Իսկ ի՞նչ է հին տիկը:

Հին տիկը այն մարդիկն են, որոնք հին վարդապետութեամբ աճած են:

Յիսուս կ'ըսէ, թէ իր նոր վարդապետութիւնը չէին կրնար ընդունիլ անոնք՝ որոնք Օրէնքի տառին կապուած էին եւ չէին կրնար իրենք զիրենք նորոգել: Հին հասկացողութեան մէջ մարդիկը անկարելի էր, որ ընդունէին նոր

ամէն մարդ  
որ Երկինքի  
արքայութեան  
կ'աշակերտի,  
թէ՛ կ'ունենայ  
Հին  
Կտակարանը  
եւ թէ՛  
Յիսուսի  
բերած  
լրացումը՝  
Աւետարանը:

**վարդապետութիւնը: Իսկ ամէն մարդ որ երկինքի արքայութեան կ'աշակերտի, թէ՛ կ'ունենայ Հին Կտակարանը եւ թէ՛ Յիսուսի բերած լրացումը՝ Աւետարանը:**

ԻՇՈՒԱՆԱՊՈՐՏ ԱՊՁԻՐԵՆ ԵՒ ՇԻՒԱՆՊ ԿԻՆԸ (18-26):

«Մինչ Յիսուս անոնց այս ուսուցումները կ'ընէր, հրեայ իշխանաւոր մը մօտեցաւ եւ ծուկնկի գալով, ըսաւ անոր.

- Աղջիկս նոր մեռաւ, բայց եկուր եւ ձեռքդ անոր վրայ դիր ու անկիւս պիտի ողջնայ:

Յիսուս ելաւ եւ իր աշակերտներուն հետ գնաց անոր ետեւէն:

Եւ ահա կին մը, որ տասներկու տարիէ ի վեր արիւնահոսութենէ կը տառապէր, Յիսուսի ետեւէն մօտեցաւ եւ դպաւ անոր հագուստի շրջանքին: Ան ինքնիքեմ կը խորհէր ու կ'ըսէր. Միայն դպամ անոր հագուստին եւ պիտի բժշկուիմ:

Յիսուս ետեւ դարձաւ եւ կինը տեսնելով, ըսաւ.

- Աղջիկս, քաջալերուէ՛, հաւատքդ քեզ բժշկեց:

Նոյն վայրկեանին կինը բժշկուեցաւ:

Երբ Յիսուս իշխանաւորին տունը եկաւ եւ տեսաւ փողահարները եւ խոռված ամբոխը, ըսաւ անոնց.

- Մէկդի՛ կեցե՛ք, որովհետեւ աղջիկը մեռած չէ, այլ կը ֆնանայ:

Բոլորն ալ սկսան ծաղրել զինք: Երբ բազմութիւնը դուրս ելաւ, Յիսուս մտաւ աղջկան սենեակը, բռնեց անոր ձեռքէն, եւ աղջիկը ոտի ելաւ: Այս լուրը ամբողջ շրջանին մէջ տարածուեցաւ:»

**Հրեայ իշխանաւորը, որուն մասին կ'ակնարկուի, Մարկոսի եւ Ղուկասի աւետարաններուն մէջ անունով կը յիշուի՝ իբր Յայրոս: Նաեւ կը յիշուի անոր պաշտօնը՝ թէ ժողովրդապետ մըն էր: Ժողովրդապետ կը կոչէին ան՝ որ սինակոկի կամ ժողովարանի պատասխանատու էր:**

Յայրոս ջերմեռանդութեամբ ծունկի կու գայ Յիսուսի առջեւ եւ կ'ըսէ. «Աղջիկս նոր մեռաւ, բայց եկուր եւ ձեռքդ անոր վրայ դիր ու անիկա պիտի ողջնայ»: Ասիկա ցոյց կու տայ ժողովրդապետին զօրաւոր հաւատքը Յիսուսի անձին հանդէպ: Եւ Յիսուս անմիջապէս ժողովրդապետին կը հետեւի՝ երթալու անոր տունը եւ յարուցանելու աղջիկը:

Յանկարծ միջանկեալ ուրիշ գրուագ մը կու գայ, որ կը պատմէ բժշկութիւնը տասներկու տարիներէ ի վեր արիւնահոսութենէ տառապող կնոջ մը:

Այս բժշկութեան կարեւորագոյն կէտն է Յիսուսի խօսքը, որ կը յայտնէ, թէ կնոջ բժշկութեան պատճառը անոր հաւատքն է:

Յայրոսի ինքնութիւնը ճշդեցինք: Ո՞վ է այս կինը: Աւետարանները որեւէ բացատրութիւն չունին: Աւանդութիւնը սակայն հետա-

քըրքրական տեղեկութիւն մը պահած է: Եւսեբիոս Կեսարացի իր Եկեղեցական Պատմութիւն գործին մէջ կ'ըսէ, թէ մինչեւ իր ժամանակ Պաղեստինի հիւսիսակողմը գտնուող Փիլիպպեան Կեսարիա քաղաքին մէջ, որ ներկայիս կը կոչուի Պանիաս, հրապարակին վրայ կային երկու արձաններ: Մէկը ծունկի եկած եւ աղաչականօրէն խօսող կին մը կը ներկայացնէր, միւսը՝ իշխանութիւն ունեցող մը, որ իր ձեռքը երկարած անոր՝ բան մը կ'ըսէր կամ արարք մը կատարելու վրայ էր: Քաղաքացիները կ'ըսէին, թէ այս արձանները տերատէս կնոջ բժշկութիւնը կը ներկայացնէին: Նոյն քաղաքացիներուն համաձայն, արձանները շինուած էին այն կնոջ կողմէ, որ բժշկութեան արժանացած էր:

Այլ աւանդութիւն մը՝ յաւելեալ տեղեկութիւն մը մեզի կու տայ: Երբ մեր Տէրը խաչելու կը տանէին, ինչպէս Ղուկաս աւետարանիչ կը պատմէ, տեղ մը կանգ առին եւ Յիսուս իր խօսքը ուղղեց լացող ու ողբացող կիներուն, ըսելով. «Երուսաղէմի՛ աղջիկներ, մի՛ լաք իմ վրաս, այլ լացէք դուք ձեր եւ ձեր զաւակներուն վրայ» (Ղկ 23.27-28): Կ'ըսուի, թէ այդ պահուն կին մը մօտեցած է Յիսուսի եւ իր գլխանոցով Յիսուսի կրթնաթոռ եւ արիւնաշաղախ երեսը սրբած: Եւ ահա Յիսուսի դէմքը այդ գլխանոցին վրայ պատկերուած է: Գլխանոցը պահուեցաւ, եւ ապա Հռոմ տարուեցաւ: Ըստ աւանդութեան, կնոջ անունը Վերոնիքա էր:

Երբ Յիսուս կ'երթայ Յայրոսի տունը, այնտեղ փողահարներ եւ խոռված ամբոխ մը կը տեսնէ:

Արեւելքի մէջ ունեւորները, ինչպէս իրենց ուրախութեանց, նաեւ իրենց սուգի առիթներուն երաժիշտներ կը հրաւիրէին, որպէսզի անոնք տխուր եղանակներ կատարելով կամ երգեր երգելով յուզիչ մթնոլորտ ստեղծեն: «Խոռված ամբոխ» ակնարկութիւնը կրնայ վերաբերիլ վարձկան լացող, ճչացող, պոռպուացող, երգող բազմութեան մը: Այդ պատճառով թերեւս Յիսուս կ'ըսէ. «Մէկդի՛ կեցէք»:

Յիսուս ներս մտնելով կը բժշկէ աղջնակը, զայն ոտքի կը հանէ՝ ձեռքէն բռնելով: Ահա լուրը ամբողջ շրջանին մէջ կը տարածուի, կ'ըսէ աւետարանիչը:

Ինչպէ՞ս հասկնալ «աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ» խօսքը: Ղազարոսի

պատմութեան մէջ կը տեսնենք, որ Յիսուս իր աշակերտներուն դառնալով կ'ըսէ. «Ղազարոս մեր բարեկամը քնացաւ» (ՅՆ 11.11): Աշակերտները սխալ կը հասկնան կամ չեն հասկնար Յիսուսի ըսածը: Ուստի կը պատասխանեն. «Տէ՛ր, եթէ քնացած է, ուրեմն կ'առողջանայ»: Հիւանդին համար քնանալը լաւ բան է, կ'օգնէ առողջանալուն: Եւ Յիսուս անմիջապէս ու բացայայտօրէն կ'ըսէ. «Ղազարոս մեռաւ» (նոյն, հմր 14):

Յիսուս «մեռնիլ» եւ «քնանալ» բայերը իրարու տեղ կը գործածէ:

Երբայական կրօնական հասկացողութեան մէջ, մարմնաւոր մահը «քնանալ» կը կոչուէր:

Արդ, երբ Յիսուս կ'ըսէ, թէ աղջիկը կը քնանայ, ըսել չ'ուզեր, թէ ան մեռած է: Անկասկած աղջիկը մեռած էր: Բայց Յիսուս մեռնիլը «քնանալ» կը կոչէ: Ինչո՞ւ համար արդեօք: Երբայական կրօնական հասկացողութեան մէջ, մարմնաւոր մահը «քնանալ» կը կոչուէր: Եւ

Յիսուս երբ «քնանալ» բայը կը գործածէ՛ր՝ նոյն բանն է, որ կ'ըսէր:

ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐՈՒՄ ԲԾԿՈՒԹԻՒՄ (27-31):  
«Եւ մինչ Յիսուս այդտեղէն կը մեկնէր, երկու կոյրեր սկսան իր ետեւէն երթալ, աղաղակելով.  
- Դաւիթի՛ Որդի, ողորմէ՛ մեզի:  
Երբ Յիսուս տուն մտաւ, կոյրերը մօտեցան իրեն. եւ Յիսուս հարցուց անոնց.  
- Կը հաւատա՞ք, թէ կրնամ բժշկել ձեզ:  
Անոնք ըսին.  
- Այո՛, Տէ՛ր:  
Այն ատեն Յիսուս դպաւ անոնց աչքերուն եւ ըսաւ.  
- Ինչպէս որ կը հաւատա՞ք թող այդպէս ըլլայ ձեզի:  
Եւ անոնց աչքերը բացուեցան: Յիսուս խտալ պատուիրեց անոնց, ըսելով.  
- Զգոյ՛ջ եղէ՛ք, որ մարդ չիմանայ:  
Իսկ անոնք ելան եւ Յիսուսի համբաւը տարածեցին ամբողջ շրջանին մէջ» (27-31):

Այս դրուագին նմանը աւետարաններուն մէջ ուրիշ տեղ ալ կայ. տե՛ս Մթ 21.29-34-ը, Մր 10.46-52-ը, Ղկ 18.35-43-ը: Մինչ Մատթէոս աւետարանիչի 21-րդ գլխուն դրուագը դարձեալ երկու կոյրերու բժշկութեան մասին է, միւս աւետարանիչները պատմած են մէկ կոյրի բժշկութեան մասին: Մարկոս անոր անունն ալ տուած է՝ Բարտիմէոս:

Այս դրուագները իրարու նման են եւ ոչ թէ՛ նոյնը: Բայց նմանութիւնը երբեք պատճառ չէ, որ մենք նոյնացնենք դէպքերը: Գիտենք

որ Յիսուսի կեանքին մէջ բազմաթիւ եւ բազմատեսակ բժշկութիւններ կան, որոնք յաճախ իրարու կը նմանին, սակայն տարբեր դէպքեր են:

Ինչո՞ւ համար կոյրերը «Դաւիթի որդի» կը կոչեն Յիսուսը:

Ասիկա կոչում մըն է, որ ուրիշ տեղ չենք գտներ, բացի Երիքով քաղաքի կոյրերու կամ կոյրի բժշկութեան դրուագէն:

«Դաւիթի որդի» կոչումը կոյրերուն մօտ արդէն կազմաւորուած ըմբռնում մը կամ հասկացողութիւն մը կը յայտնէ: Անոնք Յիսուսի անձը կը ճանչնան որոշ ձեւով մը: Արդարեւ, երբ Հին Կտակարանը կը կարդանք, կը տեսնենք որ այնտեղ գալիք մեսիային մասին խօսուած ատեն, անիկա ներկայացուած է իբր մէկը՝ որ Դաւիթի սերունդէն պիտի ըլլայ եւ անոր գահին վրայ պիտի նստի, հետեւաբար՝ թագաւորութեան սահմանուած մէկը պիտի ըլլայ:

Արդ, հրեաները իրենց կրօնական եւ ազգային պատրաստութեամբ գիտէին, որ մեսիան պիտի ըլլար Դաւիթի որդի:

Նաեւ Եսայի մարգարէի մօտ ունինք քանի մը արտայայտութիւններ, որոնք մեզի ցոյց կու տան, որ գալիք փրկիչը իր ժողովուրդին ցաւերը պիտի բժշկէ: Այդ ցաւերուն մասին ընդհանուր արտայայտութիւններ կան: Բայց մարգարէն յստակ բառերով ալ ըսած է, թէ եկող մեսիան կոյրերուն աչքերը պիտի բանայ, խուկերուն՝ ականջները, իսկ կաղերը «եղջերուի պէս պիտի ցատկուտեն», համբերը օրհնութիւն պիտի երգեն (տե՛ս Ես 35.5-6):

Այս կոյրերը եւս փրկիչին կը սպասէին, եւ ահա Յիսուս իրենց կեանքին մէջ կը յայտնուի իբր այն անձը, որ ականկալուած փրկիչին յատկանիշները կ'ամբողջացնէ: Այդ է պատճառը, որ իրեն կը դիմեն «Դաւիթի որդի» տիտղոսով եւ վստահութեամբ, թէ ան իրապէս սպասուած մեսիան է եւ թէ իրենց աչքերը պիտի բանայ:

«Երբ Յիսուս տուն մտաւ», կ'ըսէ աւետարանիչը: Սակայն չի բացայայտեր, թէ որուն տունն է, որ Յիսուս կը մտնէ: Յիսուսի՞ տունն է, Մատթէոսի՞ տունն է, Պետրոս առաքեալի՞ տունն է: Մեզի համար յստակ չէ: Շատ ալ կարելոր չէ գիտնալը, թէ որո՞ւ տունն է:

Յիսուս հազիւ տուն մտած, կը հարցնէ կոյրերուն՝ «Կը հաւատա՞ք թէ կրնամ բժշկել

ձեզ»։ Անոնք կ'ըսեն՝ «Այո՛, Տէր»։ Եւ Յիսուս անոնց տեսողութիւն կը շնորհէ։ Ապա կը զգուշացնէ անոնց, որ կատարուածը ոեւէ մարդ չպատմեն։ Սակայն անոնք Յիսուսի թելադրութիւնը մտիկ չեն ըներ, ու ամբողջ երկրին մէջ անոր համբաւը կը տարածեն, որովհետեւ չէին կրնար գսպել մեսիան գտած ըլլալու ուրախութիւնը։

Արդեօք ինչո՞ւ այս հանգրուանին աչքերու բժշկութեան դրուագը պատմուած է։ Աւետարանիչը բան մը ըսել կ'ուզէ՞, թէ պարզապէս բժշկութեանց շարքին մէջ դէպք մը կը նկարագրէ։

Այս դրուագը կոչ է տեսնելու այն՝ ինչ որ կոյրերը տեսան։ Այսինքն՝ Յիսուսի մեսիայութիւնը ճանչնալու կոչ է։

ՀԱՐ ԱՐՊՈՒՄ ԲԺՇՎՈՒԹԻՒՆ (32-34)։

«Կոյրերուն մեկնելէն ետք, Յիսուսի բերին համբ դիւանար մը։ Յիսուս չար ոգին դուրս հանելուն պէս՝ համբը սկսաւ խօսիլ։ Բոլորն ալ հիացան եւ ըսին.

- Այսպիսի բան տակաւին չէինք տեսած Իսրայէլի մէջ։ Իսկ Փարիսեցիները կ'ըսէին.

- Դեւերու իշխանին միջոցաւ է, որ կը հանէ չար ոգիները»։

Յիսուսնախորդ դրուագով ակնարկուածնոյն տան մէջ է։ Երբ բժշկուած կոյրերը կը մեկնին, իրեն կը բերեն համբ դիւանար մը։ Չար ոգին կամ դեւը մարդուն լեզուն կաշկանդած էր, եւ հազիւ Յիսուս զայն դուրս հանեց՝ համբը սկսաւ խօսիլ։ Աւետարանիչը կը յիշէ, թէ ժողովուրդը հիացաւ եւ իր հիացումը արտայայտեց։ Ժողովուրդի այս տրամադրութեան դիմաց, ունինք Փարիսեցիներու հակազդեցութիւնը։ Անոնք Յիսուսի հրաշքը փոխանակ Աստուծոյ վերագրելու, Բեհեզգեբուղին կը վերագրեն. միւս աւետարանիչները դեւերու իշխանին տեղ Բեհեզգեբուղ անունը գործածած են, որ սատանային տրուած անուն մըն է։

Այստեղ կ'ուզեմ որ դրուագներուն շարքը նկատի ունենանք։

Նախորդ դրուագը աչքերու բացուիլն էր, այս մէկը՝ համբութեան բժշկութիւնն է։

Արդեօք նպատակ մը կա՞յ, որ այս դրուագը այստեղ կը պատմուի։

Մարդուս մէջ եթէ հաւատքը գոյանայ, անիկա իր արտայայտութիւնը կը փնտռէ։ Այս ճշմարտութիւնն է, որ դրուագը մեզի կը թելադրէ։

Նախորդ դրուագին առիթով ըսի, թէ կոչ է տեսնելու այն՝ ինչ որ կոյրերը տեսան։

Այսինքն՝ կոչ է Յիսուսի մեսիայութիւնը ճանչնալու։ Իսկ այս մէկը կոչ է չուրանալու Յիսուսի ինքնութիւնը, որովհետեւ այդ ինքնութիւնը Աստուծոյ փառքի յայտնութեան համար՝ աննախընթաց հրաշագործութեան աղբիւր է։

Դրուագին մէջ բացայայտուին կը տեսնենք, որ ժողովուրդին մօտ հիացում կայ, իսկ կրօնական առաջնորդներուն մօտ՝ դժգոհութիւն։ Ոչ միայն դժգոհութիւն, այլ նաեւ ծանր զրպարտութիւն մը, թէ Յիսուս դեւերու իշխանին զօրութեամբ է, որ կը հանէր չար ոգիները։

Ուշագրաւ է, որ աւետարանիչը զրպարտութեան վրայ յորեւէ մեկնաբանութիւն չի կատարեր, այլ կը ձգէ, որ մենք խորհինք այդ մասին։

Արդեօք ինչո՞ւ համար Փարիսեցիները այսպէս կ'արտայայտուին։ Քանի որ կը նախանձէին։

Նախանձը այնպիսի ուժ մըն է, որուն ենթակայանձը կը մերժէ ընդունիլ իրողութիւնը եւ ճշմարտութիւնը։ Անոնք կը տեսնէին, թէ Յիսուսի գործերը բարի են, սակայն կը մերժէին ճանչնալ եւ ընդունիլ զանոնք իբր բարի։ Անոնց այս հակառակամարտութիւնը աններելի յանցանք մըն էր նոյնինքն Աստուծոյ դէմ։ Որով անոնք՝ իրենք զիրենք կը դատապարտէին կորուստի։ Իրենց խօսքով թէ եւ Յիսուսը կը դատապարտէին, բայց ատիկա իրենց անձերուն իսկ դատապարտութիւնն էր, որովհետեւ Աստուծոյ զրկածին դէմ կը հայհոյէին։

ՅԻՍՈՒՍ ԳԱՐԻԽԱՅԻ ԱԵՁ ԿԵ ԸԱՐՈՉԷ (35-38)։

«Յիսուս կը շրջէր բոլոր ֆաղափներն ու գիւղերը, կ'ուսուցանէր ժողովարաններուն մէջ, Աստուծոյ արքայութեան աւետարանը կը տար եւ կը բժշկէր ժողովուրդին բոլոր ախտերն ու հիւանդութիւնները։ Եւ տեսնելով ժողովուրդի բազմութիւնը, գթաց անոնց, որովհետեւ յոգնած էին եւ ցրուած՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս։ Այն ատեն իր աշակերտներուն ըսաւ.

- Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ։ Հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ զրկէ»։

Մատթէոսի աւետարանին մէջ ուրիշ տեղ ալ կը գտնենք տեղեկութիւնը (Հմմտ Մտ 4.23), թէ Յիսուս բոլոր քաղաքներն ու գիւղերը կը շրջէր, եւ կ'երթար ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր, արքայութեան աւետարանը կը տար եւ ժողովուրդին ախտերն ու հիւանդութիւնները կը բժշկէր։

ուսուցում,  
ֆարոգու-  
թիւն եւ  
բժշկութիւն:

Այս տեղեկութիւնը Յիսուսի գործունէութեան երեսները կը մատնանշուին. ուսուցում, քարոզութիւն եւ բժշկութիւն:

Նախապէս բացատրած եմ ուսուցումին եւ քարոզութեան տարբերութիւնը: Ուսուցումը եւ քարոզութիւնը տարբեր բաներ են: Առաջինը բացատրութիւն էր Ս. Գրային խօսքի մը կամ հատուածի մը, կամ մասնաւոր նիւթի մը մասին ճշմարտութեան փոխանցում էր, Յիսուսի պարագային անշուշտ՝ առաւել քան ճշմարտութեան փոխանցում էր, այսինքն՝ յայտնութիւն էր ճշմարտութեան: Ուսուցումը վարդապետական արարք մըն էր: Իսկ երկրորդը՝

դրական տրամադրութիւն ստեղծելու կը ձգտէր: Դուք մի՛ նայիք այսօրուան քարոզներուն, որոնք պաշտօնական նկարագիր ունին: Անցեալին՝ քարոզութիւնը պաշ-

Երկրորդը՝  
(ֆարոգութիւնը)  
դրական  
տրամադրութիւն  
ստեղծելու կը  
ձգտէր:

տօնական չէր, այլ պատգամի ազատ եւ արձակ ու կենդանի փոխանցում էր:

Աւետարանիչին տեղեկութենէն մեկնելով՝ Յիսուսի քարոզութիւնները կը միտէին Աստուծոյ արքայութեան աւետիսը տալու, այլ խօսքով՝ իր առաքելութեան բուն նպատակին շուրջ՝ դրական տրամադրութիւն ստեղծելու:

Յիսուս գլխաց ժողովուրդին վրայ, կ'ըսէ աւետարանիչը ու կ'աւելցնէ՝ «որովհետեւ յոգնած էին եւ ցրուած՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս»: Ապա իր մէկ կարեւոր խօսքը կ'արտասանէ:

Հովիւ չունեցող ոչխարներու պատկերը Հին Կտակարանէն կու գայ: Թուոց գիրքն է գլխաւոր աղբիւրը: Պատկերին կը հանդիպինք Հին Կտակարանին տարբեր էջերուն ալ վրայ բազմաթիւ անգամներ:

Աստուածաշունչին մէջ Աստուծոյ ժողովուրդը յաճախ ներկայացուած է իբրեւ ոչխարներու հօտ: Աստուած հովուապետն է: Իր կողմէ նշանակուած հովիւները, այսինքն՝ մարգարէները, քահանաները եւ ինչու չէ՛ նաեւ քաղաքական առաջնորդները կոչուած են խնամելու իրենց յանձնուած ժողովուրդը: Հին Կտակարանի մարգարէական գրականութեան մէջ յաճախ կատարուած է

յիշեցումը, թէ այդ հովիւները իրենց դերին մէջ չեղան, լքեցին իրենց հօտը եւ անոր կարիքները անտեսեցին: Նոյն կացութիւնն է, որ Յիսուս կը տեսնէ իր դիմացը:

Հաւանաբար ժողովուրդը այնքան տեղեակ չէր իր կարիքներէն, բայց Յիսուս ինք կը տեսնէր եւ այդ պատճառով կը խղճայ, եւ ձեւով մը կ'ըսէ, թէ նոր հովիւներ պէտք են:

Ինք հովիւ բառը չէ գործածած այստեղ, այլ խօսած է մշակներու օրինակով: Ըսած է, թէ ցորենները աճած են, հունձքը առատ է, սակայն քիչ են մշակները: Հետեւաբար, պէտք է աղօթել Աստուծոյ, որ Ան «իր հունձքին համար» մշակներ ղրկէ:

Յիսուս ցոյց կու տար, թէ իր շուրջը ժողովուրդը կը շատնար, հետեւաբար իր առաքելութեան տարածման համար իրեն օգնական գործակիցներու պէտք ունէր, իսկ իր ունեցածը քիչ էր:

Այս հատուածը մեզ կը պատրաստէ յաջորդ գլխուն, ուր ներկայացուած է տասներկու առաքեալներուն ընտրութիւնը, անոնց առաքումը, անոնց կրելիք նեղութիւններն ու հալածանքները, ունենալիք ընթացքը եւ վարձատրութիւնը:

Արդեօք այս դրուագը աւետարանիչը ի՞նք այստեղ գետեղած է, թէ Յիսուսի գործունէութեան ժամանակագրական իրական ընթացքը այսպէս է եղած:

Ճիշդ է, որ թէ՛ Մատթէոս աւետարանիչ եւ թէ՛ միւս աւետարանիչները տարբեր ժամանակներու մէջ պատահած դէպքեր երբեմն քով քովի դրած են, անոնց ներքին կամ հոգեւոր առնչութեան պատճառով, սակայն այս դէպքը կը թուի, որ իրօք տեղի ունեցած է նախքան աշակերտներուն ընտրութիւնը, քանի որ յայտնապէս եւ շատ անմիջականօրէն կապուած է այդ ընտրութեան:

(Շարունակելի 39)



**ԵՐԵՄՆՈՐԵԱԿ**

Հրեգաբարձր, 16 Յոդիս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրրաւոր, 19 Յոդիս 2009

**ՎԱՐՊԱՎԱՆ**

**ՊԱԾԱՆՈՎԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍ**

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երուտաբարձր, 20 Յոդիս 2009

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՆԵԼՈՅ**

Հրեգաբարձր, 23 Յոդիս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրրաւոր, 26 Յոդիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրեգաբարձր, 30 Յոդիս 2009

**Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵԱՐՈՊ**

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրրաւոր, 02 Օգոստոս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրեգաբարձր, 06 Օգոստոս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրրաւոր, 09 Օգոստոս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրեգաբարձր, 13 Օգոստոս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրրաւոր, 16 Օգոստոս 2009

**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԱՆ**

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

**ՏՕՆ ՎԱՐՊԱՎԱՆԻ**

(ՊԱԾԱՆՈՎԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ  
ՅԻՍՏՈՍ ԹՐԻՍՏՈՍ)

կը պատարագէ եւ կը քարոզէ

Գրշ. Տ. Սուրէն Ս. Արք.  
Գաթարոյեան

սկիզբ ա. պատարագի ժամը



**ՀՈՎԻԻԸ**

**ԸՆՏԱՆՆԻՔՆԵՐՈՒՄՆ ՄԷՁ**

Անոնք որ կը փափաքին  
հովիւին այցելութիւնը ունենալ  
իրենց տունէն ներս,  
թող քարտեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 331 5445 x203  
կամ՝ 514 909 5203 քիւերէն մէկուն:

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու  
չաւար Ձեր ե-չաւօէն ուրողարկե՛ժէք  
eglise58@sourphagop.com-ըս

Նախորդ թիւերը կրնաք գտնել  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
ԿԱՂՔԷԶԻՆ ՎՐԱՂ